


360 —

ՈՍՏԱՆԻԿ



Կեանքս դարձրել եմ
Կարկաշ մի երգի,
Ու էլ չգիտեմ
Ո՞ւր պիտի յանգի...



891.99

Հ-85

ԹԵՀՐԱՆ

Տպարան «ՄՈՂԵՐՆ»

1934

891.99
2-85

1935
պատկեր
նայ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

891.5
14 FEB 2011

202

Ձ ե գ ի

Ինչպէս խեղճ, ինչպէս գիւն՝լ,
Կեանքի ձեր խնայփին, ես
Եկել եմ, բերել սիրով,
Ի՛նչ ունեմ նւիրեմ ձեզ:

Ի՛նչ ունեմ սիրո՛ւլ, արտա՛նց,
Բոլորը, բոլորը տա՛մ,
Չպահե՛մ թող ո՛չ մի կայծ,
Իմ արտում այս օր ձեր տան:

Ուզում եմ որ դո՛ւք խնդաք,
Դո՛ւք ելնէք ԳԱԼԻԹԻՆ դէմ,
Որպէս ողջ, միակ երակ,
Արնաբամ իմ այս երկրէն:

Ինչպէս խեղճ, ինչպէս գիւն՝լ,
Կեանքի ձեր խնայփին, ես
Եկել եմ, բերել սիրով,
Ի՛նչ ունեմ նւիրեմ ձեզ:

11 JUN 2013

39655

— 3 —

Ո Ջ Ի Ն Չ Ը

Կորցրել է մէկ ինչ որ բան.
Ման է գալիս որ գտնի
Ձեռքին՝ ճրագ մոզական,
Սրտում՝ ցաւը կորուստի...

Բայց այդ ի՞նչ է—արդեօք ի՞նչ,
Հարցնում, անցնում են բոլոր.
Պատասխանում է—ՈՋԻՆՉ...
Ու որոնում նորից նոր:



612-2011

ԱՅՍ ԵՍ ԵՄ

Այս ես եմ, ես եմ. նոյն ինքն իմ մէջ
Տիեզերքն ամբողջ, ժամանակն անվերջ,

Որ կը ծաւալի ու կը ծանրանայ,
Մշտնջենական պարապին վրայ...

Որ կը դառնայ Զեի, ԶԱՆԳԻԱԾ ու ՇԱՐԺՈՒՄ,
Ինքն իրմով պարապ՝ ինքն իրմով լեցուն,—

Կազմելով կեանքն այս—միբնիկ ՈԶՆՁԻ
Ուր իր մահովն ալ, կը վերածնւի...

Այս ես եմ, ես եմ. ուրիշ ոչինչ կայ,
Իմ ՄՇՏԱՀՈԼՈՎ էութիւնն է սա:

ԱՅՆ ՀԵՌՈՒ ՀԵՌԱՒՈՐԻՆ

Ի՞նչ անուն տամ քեզ աշխարհումը այս,
Որ ամէն մի սիրտ զգայ ու ապրի
Այնպէս, ինչպէս որ ԵՂԵՂ ես ու ԿԱՍ
Սահմաններէն դուրս մարդու երձի:

— Ո՛չ աղջիկ ես դու, ո՛չ փառքի ճամբայ,
Ոչ էլ աշխարհիկ մի վեհ զգացում,
Բայց շունչդ արդէն շարժում է ահա
ՀԱՍԿԵՐՆ՝ ԻՄ ՀՈԳՈՒ ՀՈՍԱՆՔՈՎ, ՀԱՍՈՒՆ...

ԼՈՒՍԵՂԷՆ ՃԱՄԲՈՒՄ

Ես թափառական
Անցյորդ մի, անան,
Դո՛ւ, յաւիտենական
Լուսեղէն ճամբայ,

Եկել եմ գինով
Ու կանգնել քո դէմ,
Ասան, որ կողմով
Եւ ԻՆՉՊԷՍ անցնեմ...

ԻՆՔՆԱՄՓՈՓՈՒՄ

Արեւի պէս, արեւի մօտ
Կանգնել եմ ես ու երգում,
Նոր է բացւում դեռ ԱՌԱՒՕՏ
Իմ դէմն անծիր կապոյտում:

Դուք ԴՆԱԾ էք տակաւին ձեր
Ծմակներում հեռակայ
Եւ սուերս արեաբեր,
Հիմա կընկնի ձեզ վրայ:

Պահ մը յետոյ դարձնէք պիտի,
Կանչէք դարձիւր յետ դարձիւր...
Սակայն իմ դէմ կը ծաւալի
Կապոյտը նոր ու անծիր:

Ա Ռ Ա Ի Օ Տ

Խաւարին մէջ, լուսածածան
Բայցած պայծառ իմ առաւօտ,
Զարթնող մի նոր կեանքի նշան,
Շաղթա շուշան իմ առաւօտ:

Իմ առաւօտ, իմ ծնի անծիր,
Իմ ծփծփուն կապոյտ յաժում,
Երէկը դեռ դու չկայիր,
Գլխիս վերեւ չէիր ճախրում:

Երէկը դեռ, անհրապոյր,
Մոռի, մածուցիկ մի երեկոյ՝
Մորմոք էր լոկ կարօտս կոյր,
Ու զուրկ ցնորք՝ տեսիլը քո:

Ահա սակայն, որպէս խնդուն
Մի խլրտում միջոլորտի,
ԶԵՒ ես արդէն, ՄԱՐՄԻՆ ու ԳՈՅՆ,
Իմ առաւօտ բարի լոյսի:

Ահա փուռել՝ արեւքանդ,
Տարածում ես կեանքիս վրայ,
Կրծքիդ խրած մի աղամանդ,—
Մի սուկի սուր—հրավառ ջահ:

Ու վար՝ մամռած ճահիճներում,
Ծմակներում խուլ ու խոնաւ,
Արդէն ընկել են շողշողուն,
Դո առաջին ցոլքերը վառ:

Արդէն ամէն խուլի ու խոռոչ,
Ամէն կածան ու արահետ,
Արձակել նոր ծիլ ու բողբոջ,
Զուգորդում են մէկ մէկի հետ:

Եւ գոյնզգոյն երանգներով,
Երակներով ծիածանւած,
Զարթնի պիտի շուտով, շուտով,
Ու բռնկւի աշխարհը ցած...

ԱՌԱՋԻՆ ՇՈՒՆՉ

Օրերն ինձ այս տեղ են բերել,
Բարձր այս լեռան գլխին,
Ուր ոսկի մի շող է կաթիլ
Ու խառնել կապոյտը իմ:

Ու կանգնած ահա յուսափառ,
Կախում եմ շիկնած օդում,
Որքան որ նոր գոյներ կան վառ,
Ու զւարթ երգեր հիւսում:

Փշուել է աչքերումն իմ
Տրամաշուք մի Հին ԴՂԵԱԿ.
Դղեակի խորհուրդը հին,
Մի «ասպետ» ու մի դայեակ:

Բացել է լայն դէմս ահա
Գոյութեան այլ մի աշխարհ,
ԺԱՄԱՆԱԿԻ սրտի վրայ,
Որպէս նոր ՃԵՂԲ արեառ:

Ոսկեքանդակ ու լուսազարդ՝
Ողկոյղի պէս այդ ճեղքում,
Կախարդւել են գիւղ ու քաղաք
Յակնթափայլ ու ժպտուն:—

Կեանքը վառման մի շունչ վարար,
Քնդցր ու հասուն մի նոր սէր,
Հոսում է յորդ ու յուսափառ
Ու ոռոգում ամէն տեղ:

Բարձր, լեռան այս կապոյտում,
Աստանդակած հոգիս ու ես,
Կանգնել ահա լոյս ենք ԿԱԼՍՈՒՄ
Ու ԵՐԱՆՈՒՄ—լիացնում ձեզ:

Ե Լ Ք Ը

Զկայ ոչինչ օտար
Աշխարհում այս հին,
Ուր էլ լինես, պայծառ,
Ժպտան ամէնքին։—

Ուղիներում անծիր,
Սրտաբաց, հրկէզ,
Հանդիպողին գրկի՛ր
Հարազատի պէս։

Եւ ուր մի հուր շողայ,
Մօտիկ՝ թէ հեռուն,
Կարծիր քո լոյսն է դա,
Դո՛ւ ես վառել կեանքում։

Պալատներում՝ թէ մի
Խրճիթում աժան,
Մէկ է, ժպտա, անցի,
ԱՆՅՈՐԴ բարեկամ...

ԴՐՍԵՒՈՐԻՈՒՄԸ

Արցունքներու մէջն ես դուն,
Իմ անանուն արամութիւն։

Յանկարծ կերեայ,
Կը նայէ ինձի
Վայրկեան մը, ապա
Նորէն կանհետի։

Կանհետի, սակայն
Հոգու մէջ արդէն,
Աննշմար, անձայն,
Ինչ որ կը քանդեն...

—Եւ աշուն մ'ինչպէս,
Վարսաթափ ու թաց,
Լեցուն՝ աչքերէս
ՆԱ կը հոսի ցած։

ԻՄ ՍԷՐ

Դու մի լաւ երգ ես.
Դեռ քեզ չեմ երգել.
Ու չ'երգած ես քեզ,
Չեմ կարող մեկնել:

Ծանօթ է արդէն
Ձայնդ իմ հոգուն,
Ես քեզ լսել եմ,
Դեռ օրօրոցում:

Դեռ երբ՝ ինձ համար,
Աշխարհը համայն,
Օրօրուն ու վառ,
Գիրկ էր մայրական:

Լսել եմ ես քեզ
Ու քեզմով սնւել.
Մօրս կաթին պէս,
Լուսակաթ իմ սէր...

ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԵՂԵԴԻՆ

Հասակ նետեց օրէ օր,
Նշենու պէս մեր դրան,
Ծիծղուն ու ծով աչքերով,
Մի աղջնակ հարեան:

Ու այս գարնան առաջին
Աւշովը՝ շող ու շաղի,
Կախեց արբունքն իր լանջին
Երկու կոկոն խաշխաշի:

— Հիմա... կրքոտ ու կիզուն,
Հասունութեան մեղեդին,
Գիրկ ու գգւանք է յուզում,
Թաթխած կսուցն իր շուրթին:

ԱՌ, ԱՂԶԻԿ ԶԱՆ, ԱՌ

Աշնան մեղրածոր արևի նման,
Որ քաղցր է այնքան ու այնքան շոյուն,
Ծփում է սիրով սիրտս նայիրեան
Այս արևելեան քաղաքի փողում:

Ու մեղմ, օրօրուն զգացում մի նոր,
Մի դոյ, մի սարսուռ երբեմնի ծանօթ,
Յառնում է, վառում մէջս նորից նոր
Անթեղած մի կայծ, մղղած մի կարօտ...

—Օ՛, բեղուն ու յորդ իմ սէր, իմ աշուն,
ՀԱՏՈՒՅՈՒՄԻ միակ եւ սուրբ և արդար
Եւ իմաստ բոլոր ժամանակներուն,
Օ՛, ՀԱՍՈՒՆՈՒԹԻՒՆ—ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ մայր...

Ա՛ռ, աղջիկ ջան, ան սրտի այս պատաս
Ու համեղ, անուշ մրգին պէս մեղքի,
Թող շուրթերդ նուռ ու նայածքդ վառ
Իմ մէջ հասունցած նոր սէրս ճեղքի:

ԶԱՌԱՆՑԱՆՔ

Երբ մարի, մարի աչքերում մեր այս,
Ճաճանչն արեին ու լոյսը, Զիւլֆա,
Երբ միտը՝ վերջին մեր մարմնի երազ,
Էլ ոչ մի զրգիւ, կրակ չունենայ,

Երբ նետած արգէն մի մութ խոռոչում,
Քիչ-քիչ կը նեխի գիտէները մեր,
Ու այդ ԼՈՒՄ ԶԵԻ շաբաթան ընթացքում,
Գառնանք ես ու դուն ճիճուներուն կեր...

Ու երբ էլ, ոչինչ, ոչինչ չմնայ,
Ու ԳԱԼԻԲԸ գայ իր ՀՈՂԸ ՀԵՐԿԻ,—
—Այդ հոգի վրայ տրորած Զիւլֆա,
Գառնալով այլևս բոցակէզ փոշի,—

—Բայց դեռ ԶԳԱՅՈՒՆ, դեռ ԻՄԱՅԱԿԱՆ,
Աւելի նրբին գուցէ քան առաջ,
Մեր հոգու հոգով, վերստին անգամ,
Կը լսենք կեանքի աղմուկն ու շառաչ...

ՇՊՁ - 2017



Որպէս ԳՈՅՆ ու ԲՈՅՐ ու ԹՐԹՌԱՅՈՒՄ,

Մի շաղի, շողի լուսանցքով պայծառ,—
—Ուր ամէն-հիւլէ, մասնիկ մեր փռշուէն,
Հանդիպած կրկին կը կցւեն իրար,

—Աշխարհը կղզանք որպէս քաղցր դող,
Որպէս մի սարսուռ ու հոսանք, հոսանք,
Վայրկեաններու հետ դարեր հոլովող,
Յաւիտենութեան անսլշ դառանցանք:

Ս Ր Տ Ի Ս Ն Ե Տ

Ախ, այս պայծառ արեւի տակ, այս աշխարհում հնամենի,
Ուր բիւր մարդիկ անմխիթար երազել են, չկան հիմի,

Սիրտ իմ, դու էլ, սիրտ իմ, դու էլ մի անողոր ակնթարթում,
Պոկւես պիտի ինչպէս մի քար ու փշրւես մի խոռոչում:

—Ընկնես պիտի սիրտ իմ, դու էլ, լուծւես պիտի փռշիներում,
Որ սրտեր են կեանքից բեկւել, նոր Զեռ առել ու նոր ՇԱՐԺՈՒՄ:

Խառնւես պիտի լուռ զոյութեան այս ԲՈՒԹ Զեռին ու ՇԱՐԺՈՒՄին
Ու նորէն ԲՄՆՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ աճի ԱՃՈՒՄՆ անքննելին:

Ու տարինէր, դարեր անցնեն, ու լինի նոյն արեւ, աշխարհ
Ու լինի նոյն կարօտը վեր—կեանքը մաշող ու խելագար:

Եւ ո՞վ գիտէ որի՞ կրծքում, սիրտ իմ, մի օր ծփատ էլի,
Ախ, ո՞վ գիտէ որի՞ սիրտն էս, որ իմ կրծքէն ընկնես պիտի:

Բայց կուգէի գէթ, անխուսափ ձևափոխմանդ վերջին պահուն,
Սիբտ, թէև զուր, բայց ճշայլը, սո՛ւր ճշայլը այս աշխարհում...

Ու ճիշդքո, արժազի պէս ԿՏՐԷՐ ԿԵԱՆՔԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ
Ու այդ բարակ ճեղքաճծէն ներս կաթէր մի շող այս աշխարհում:

Կաթէր, շողանք մի գլիծ, մի թեւ օրերու հետ մշտանուով,
Դարերէ դար, բազմահազար, ու բազմադոյն օղակներով.

Որպէս կեանքի մի ԱՆՀԵԹԵԹ երջանկութեան անմահ երազ,
Սիբտ իմ, մի թեւ, սիբտ իմ, մի ՇՈՂ քեզնից մնա՛ր աշխարհում այս...

* * *

Ինչ որ տեսար ու ապրեցիր սիբտ իմ դուն,
Համարիր թէ անդ էր ամէնն աշխարհում,
Համարիր թէ ուրիշ ոչինչ էլ չկայ
Եւ ինչ լինի, նոյն կը լինի ինչպէս կայ:

* * *

Այս աշխարհում թէ չհասար ոչ մի տեղ,
Բայց լսեցի՛ր սիբտ իմ, կեանքում մի երջանիկ
առասպել.
— Հեռանալիս ուրախ նայիր աշխարհին,
Թէ գալը կայ, մենք էլ կը գանք մեր հերթին...

ԵՐԵՔ ԿԷՏ

Սաղում էինք, հոյս կորաւ,
Ու լաց եղայ դառնադին,
Հետս էլ նստեց ու լաց եղաւ,
Հիւն, մանկութեան ընկերն իմ:

Օրերն անցան, անցաւ և մեր
Մանկութիւնն էլ ու հիմա,
Արդէն հասուն կեանքն է դարձել
Մեր խաղի հոյն երէկւայ:

Բայց թէ յանկարծ կեանքս կորի,
Հին, այդ կորած հոլի պէս,
Գիտեմ, ընկերս էլ չի լացի,
Զի ամսոտայ էլ այնպէս...

Կ Ե Ա Ն Ք Ս

Ինչպէս մի սուր արձակած ճիչ, ինչպէս մի զուր դուրս պրծած նետ,
Սրտիւմ է ԿԵԱՆՔՍ, անմիտ գոյութեան մէջ այս յուսարեկ:

Սրտիւմ է ու ինքն իրմով մղում ատաջ ու գէպի յետ,
Հազար ձևով ու երանգով խաղում անցնող օրերուն հետ:

Եւ ընթացքում իր այս խելառ, մերկ, հոգիով ու մարմնով,
Պատարելով մի վեհ երազ ու դեռ ծփուն սիրոյ մի ծով,

ՅԱՅԱՆՈՒՄ է մէկ՝ վարը, խոն, մինչև տիղմը վերջին հոգու՝
Ուրկէ անդին, ոչ մի ձևով էլ չի անցնի մաղձը մարդու...

Ուր ԱՆԵՐԱԶ, ու ԽՈՒԼ, ու ԿՈՅՐ սողոսկում է ու յօրանջում,
Քնատ ու բուխ միտքը ամուլ իր անսահման պարասներում:

Մէկ էլ՝ թեքում է շեղակի, օրհնում կեանքի չարն ու բարին,
Թքած հողը լիզում սիրով, ժպտում ամէն հանգիստդին,

Շոյում՝ ամէն մի լեցած սիրտ, և ին վերջի համար, ներսւմ,
Չարին՝ անշար, ու վատին լաւ, խեղկատակի խօսք է ասում.

Նստում է լսու նրանց դիմաց պատրաստակամ ու հնազանդ,
Հսում ամէն ծամածուռ շրթունքներու խօսքը պռատ,

Ու խմելով նոյն առօրեայ հաճոյքների պղտոր գինին
Յարմարում է ամէն տեսակ թմբկահարի եղանակին...

Կանգնում է մերթ, քարացումով վայրկեանական սարսափահար
Շուրջն է նայում ու գէպի յէտ, ուր չի թողել... ոչինչ չկար...

Ապա՝ անկարծ մի նոր թափով, խոյանում է առաջ, շշում,
Իմաստութեան վերելքներով, գէպի մի նոր իմաստութիւն,

Դէպի ԱՆՓԱՌ, ԱՆԱՊԱԳԱՅ ու ԱՆՆՐԷԿ տարածութեան
Անծայրածիր սահմանների լուսթիւնը յաւերժական:

ՍՏԻԵՐԻ ՄԷՋ ԿԸ ՄԻԱՆ

Ուղեղէն իմ տօթակէզ, աչքերուս մէջ արձակած,
Կը պայթի հին մի աշխարհ, հրածփուն, հոսանուտ
Եւ ես նորէն կսկսիմ, ինքն իր վրայ ջախջախւած
Նաւակի մ' պէս յուսաբեկ, հողիս զարնել խութէ-խութ...

Նորէն գէմս կը բացւին խորխորատները բոլոր,
Օրօրոցէս՝ մինչև այս առաւածային Գողգոթան,
Որոնց ամէն մէկում, ես, արդէն թաղել եմ մի օր,
Իր ՔԱՂՅՐՈՒԹԵԱՄԲ, իր ԹՈՅՆՈՎ, իր գոյներով բաղմազան:

— Ահա հեռուն... օրերուս խաւարամած ծաղքերում,
Ուր իր ՈՍՏՅԱՆՆ է ՀԻԻՍՈՒՄ ՄՈՌԱՅՈՒԹԻԻՆԸ հիմա,
Անդամալոյծ ու լքած, իմ չօրօրած մանկութիւն,
Որ դեռ կախւած գլխովար յուշէ մը հետ կը ճչայ...

Ու մինչ՝ ձորէ-ձոր ծեծուող, իր չարչուող արձագանդ
Լեղապատառ կիյնայ գետ, ճերմակ ճամբով ջաղացի,
Երազի մէջ սկսող հէքիաթի մ' պէս ԱՆԱԻՄՐՏ,
Լուսակատար լեռներէն ՊԱՏԱՆՈՒԹԻԻՆՍ կանցնի...

Յետոյ մի տուն, մի երթիկ, մի երջանի՜կ առասպել,
Որ նախնիքներս հիւսեցին իրենց լուսէ մասներով,
Սաւերի մէջ կը ծխան, կանցնին լեռան մը ետև,
Ուր ունի առած մի կապոյտ, գիւղս ծաղկում էր մի օր...

Ե Ր Յ Ա Լ

Վեր կենալ նորէն, բռնել լուսականչ ու արեւթոր
ուղիները հին,
Ու մտնալ մի գորշ կեանքի մզմաւանջ, որ թոյն էր միայն,
ու թախիժ դեղին:

Մտնալ ու մտնալ և ոչ մի տեղ էր, ոչ մի ժամանակ
չլիշել կեանքում,
Ինչ որ իմ հոգին ապրել է, տեսել, աշխարհի այս պերճ
լաբիրինթոսում:

Երթալ. գոհ, անշար ժպտով բարի, կանաչ հանդերում
թափառել կբիլին,
Եւ որքան դեռ կայ սէր, սրտի ճաճանչ, պարզել կարօտով
ՀՈՂԻՆ ՈՒ ԶԲԻՆ.

Զինչ կապոյտներուն, ջրերուն վճիտ, մի ողջոյն տակ
սրտաբուխ ու վառ,
Ու նրանց խորունկ խորհուրդի մէջ նոր, երջանիկ կեանքի
մի վրճակ բանալ:

Հանդիպող մարդուն մօտենալ որպէս եղբայր հարազատ
ու նրան լսել,
Ունեցած վերջին պատառը հանել սիրով, սրտաբաց
ու հեալ կիսել:

Ունկնդրել երկաբ, լսել հիասթանչ երգը իր հոգու
բարկ արեւի դէմ,
Ու խոր հաւատով ըմբռնել, զգալ, որ դօղանջ է դա
նոր կեանքի վսեմ:

Հաւատալ նրան ու իր ՔՐՏԻՆՔԻՆ ու իր ՅՈՅՍԵՐՈՒ
ՀՐԱՇՔԻՆ խնդուն,
Որ ՇՈՂՈՒՄ Է ԼՈՒՌ ԱՐՏՈՒՄԸ ԿԱՆԳՆԱԾ քրտնախաշ եղան
ԽԱՂԱՂ ԱԶԳԵՐՈՒՄ:

Երթալ, ան, երթալ...

ԲԱՑԱԿԱՆ

Վառել եմ ահա ես, սենեակումն իմ այս նոր,
Բոցակէզ ու բուրեան ճիւղի մ' պէս մայրիկի,
Ծերութիւնս անտեսած և աճած հոգուս խոր,
Դեռ կանաչ ոստերով մի կանոն կարօտի...

Ու ժպիտ մի անուշ, նշենու նազանքով
Կը ծաղկի նայածքիս թափանցիկ փեղկին պէմ,
Որուն հիւր կատարէն, կապոյտէն երանգւող,
Լուսիկ թիթեռներ-թերթիկներ կը ճախրեն...

Կճախրեմ ես ինքս էլ, կտրւած ՆԵՐԿԱՅԷՆ,
Յանձնւած հարեան մի աղջկայ մեներդին,
Որ կործել է շոյուն, կոպերուս վրայէն
Քնաբեր քնքշութեամբ իր թաւիշ մեղեդին,

Ու կարթեւ էութիւնս կայծկլտուն շեշտերով,
Տանելով ինձ մինչև երազի մ' դիւթական,
Ուր կիյնամ յորձանուտ յոյզերուս սարսուռով
Գլխիվար ու առկախ, անդունդի մը վրան...

Շողի՛մ՝ պէս, շաղի մ' քով, մի ծաղկի բաժակում,
Առէջի մ' փռչիէն նայելով անծանօթ
Անհունին միւս ափ—սենեակիս մէկ անկիւն,
Ուր նիրհում է լքւած մեղէն իմ անօթ...

Նայում եմ... զգում եմ... այս ես եմ ու արթուն
Մօտենում՝ ինքս ինձ, հեռանում ինքս ինձմէ,
Մինչ արդէն կը լուսնայ, սուերի մը յանգոյն
Կանհետի ԲԱՑԱԿԱՆ... ու դուքսը կը ձիւնէ...

ԶՐՈՅՑ

Նստեցինք մի քարի վրայ,
Ասաց.— Մեզնից ով մեռնի,
Թող այս քարը լինի նրա
ՍԻՐԱՐՁԱՆԸ շիրիմի:

Ու նայեցինք պահ մը իրար
Ափսոսանքի՝ նայւածքով,
Գուցէ նա իմ՝ ես էլ իր վառ
Կեանքի վրայ դողալով:

...Նստած եմ նոյն քարի վրայ,
(Իսկ նա, հիմա քարի տակ...)
Կը խորհեմ լճու ու կը թւայ
Կեանքը յիմար մի ԿԱՏԱԿ:

ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Ասացին՝ եղել ես Հայաստան,
Հին, հզօր մի երկիր արգաւանդ,
Ուր ծաղկել է երբեմն, նայիրեան
Քո անուշ առասպելն ու հէքեաթ:

Ասացին՝ որ դու ես օրօրել,
Թօրօցն աշխարհի ազգերուն,
Ու լուսէ ստինքովդ անուցել,
Նրանց մերկ ու վախ՝ մանկութիւն:

Քեզմով է սկսել Բաբելոն,
Վերջացել աշտարակն էյֆէլի.
Քու գծած մի պատկերն է Հոռոմ
Ու մի գիծ՝ Ազրիալոյն Աթէնքի:

Ասացին, ծովից ծով գծեցին
Սահմաններդ անսահման ցաւի մէջ,
Սերունդներ որ իրար փակեցին,
Որպէս հին մի գրքի գունատ էջ:

Եկայ ես. բոլորից յետոյ ես.
Յոյսերովդ, յոյզերովդ օրօրուն,
Ուղեղիս մէջ նախշուն մի քարտէզ
Ու վրան՝ պատմական քո անուն.—

—Հայաստան, Հայաստան, Հայաստան,
 Երջանի՛կդ իմ երազ հայրենի,
 Օ՛ր, յաւէտ յուսացւած արքաւորան,
 Օ՛ր, հէքեաթ, ո՛ր ցնորքդ իմ ցեղի:

Նայեցի, սերտեցի քեզ անվերջ,
 Զարմացող աչքերով մանկութեանս,
 Մանկութի՛ւնս... մորթեցի ես քո մէջ,
 Որպէս զէր ու անգին մի նոխազ,

Փնտռեցի իրական մի պատկեր,
 Պատրանքի, հրաշքի՛ չափ խնդուն,
 Շողշուղուն լուսաբաց մի շքեղ,
 Քու անցած՝ իմ ապրած օրերում:

Տւի քո ախտաւոր հմայքին
 Իմ սրտի, իմ մտքի ամէն կայծ,
 Ու սակայն պօէտի իմ հողին
 Ոչնչով՝ ոչ մի օր չխնդաց...

Զտեսնյ ի վերջոյ քո դրան
 Ո՛չ մի բան աւելի՛ կենդանի,
 Բացի նոյն յաւիտեան, յաւիտեան
 Վիրաւոր, արնաքամ պատանին:

Սոշտանգւած իր մօր քով—ամէն տեղ,
 Ու նրանց աչքերէն՝ կախ ընկած իմ պատկեր...
 —Հայաստան, Հայաստան, Հայաստան...

ՀՀ Ազգային գրադարան



NL0344240

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

«Հեկեկանցներ», Երևան (սպառում)
 «Զիլճի երգեր», Թաւրիզ (սպառում)
 «Արեւելէն Արեւմուտք», Փաւրիզ (սպառում)

ԳԻՆ 5 ՌԻԱԼ

Դ Ի Մ Ե Լ

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն

13, Khiaban Khasse, Téhéran.